




Կոնֆլիկտների նկատմամբ զգայունության թեմայով ՔՀԿ-ների կարողությունների զարգացման եռօրյա դասընթացի գնահատման հարցաշար Հոկտեմբեր 8-10, 2019

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը շնորհակալություն է հայտնում հոկտեմբերի 8-10-ը տեղի ունեցած դասընթացին մասնակցելու համար: Խնդրում ենք 20 րոպե ժամանակ հատկացնել գնահատման հարցաթերթիկը լրացնելու համար:

1 Համընկա՞ն արդյոք դասընթացից ձեր սպասելիքները արդյունքների հետ:



2 Ստացած արդյո՞ք բավարար գիտելիքներ կամ գործիքներ, որոնք կօգնեն լուծել ձեր կազմակերպության խնդիրները:





Կոնֆլիկտների հաղթահարման գործիք:

Տպավորվեցին Կոնֆլիկտային զգայունությունն ու դրա կիրառումը, կոնֆլիկտի վերլուծություն, միջամտություն և Կարծրատիպեր, Ընդհանրական մտածողություն թեմաները: Ստացա ավելին քան սպասում էի:

Կոնֆլիկտազգայունություն և կոնֆլիկտի վերլուծություն, կարևոր բաղադրիչներ են, և դրանց զգայուն մոտեցումը անհրաժեշտություն

Հետաքրքիր էր այն մոտեցումը, որ կարծրատիպերի հետ աշխատեսլիս, որոշները կարելի է փոխարիլել ավելի քիչ խտրական կարծրատիպերով, ինչպես նաև կոնֆլիկտի վերանայման Խօալի сознание знание մտածողության մոդելը:

3 Ստացած արդյո՞ք բավարար գիտելիքներ կամ գործիքներ, որոնք կօգնեն զարգացնել ծրագրեր:





Կարծրատիպեր վերափոխելու գաղափարը:

Շատ օգտավետ էր Կոնֆլիկտների զգացողության կիրառման, կոնֆլիկտի վերլուծության ցիկլի, առանցքային հարցերի դիտարկումը:



Կոնֆլիկտների փոխակերպում, փոխազդեցություն, ուսումնասիրություն, վերլուծություն կարևորում են նախագծերում և ամենօրյա աշխատանքում:

Ծրագրերի զարգացման ժամանակ "Պիցայի մեթոդը" կարող է օգտագործվել որպես պարտականությունների և պատասխանատվության բաժանման գործիք:

4 Ստացա՞ք արդյոք բավարար գիտելիքներ և կամ գործիքներ, որոնք կօգնեն ձեր աշխատանքային պարտականությունները ավելի արդյունավետ կատարել:



5 Արդյո՞ք դասընթացին ներկայացված թեմաները՝



Կոնֆլիկտների լուծում պլանավորող գործիքը:



Նոր ու իմաստալից էր արծարծվող թեմաներում մոտեցման տեսանկյունը:

Կոնֆլիկտի նկատմամբ զգայունություն, կոնֆլիկտ վերլուծություն, ստերեոտիպերի փոփոխություն, փոփոխություն դեպի դրականը: խմբային աշխատանքները լրացրեցին, արդյունավետ դարձրին մոտեցումը:

Կոնֆլիկտների վերլուծության ժամանակ նպատակային է կիրառել մարդակենտրոն մոտեցում, ինչին նպաստում է կոնֆլիկտների հանդեպ զգայուն լինելը:

Որոշները նոր էին, սակայն լավ կլիներ ավելի շատ մեթոդներ ներկայացվելին

7 Ձևավորվեցի՞ն արդյոք կապեր որոնք կարող էք օգտագործել հետագայում՝
 նոր ծրագրերի մշակման, նոր գաղափարների իրականացման նպատակով և
 այլն:





Մասնակիցների միջև Ձեր կազմակերպության հետ

Ունեցանք ծանոթություններ, բայց կապեր ձևավորելու համար ազատ ժամանակը քիչ էր:

Կա մեկ գաղափար, տարբեր մոտեցում: Առաջարկ եմ արել վերլուծել մոտեցումները, տեսնել փոփոխությունները, ազդեցությունը, արդյունքը.....



Դասընթացի ժամանակ ծանոթացա որոշ անհատների հետ, որոնք ներկայացնում էին այն ոլորտները, որտեղ կարծում եմ կստացվի համատեղ աշխատանք իրականացնել:

8 Ինչպե՞ս եք պատրաստվում տարածել ինֆորմացիան այս միջոցառման մասին ձեր մասնագիտական շրջանակում:



տարբեր հանդիպումների մասնակցելիս տարածաշրջանների դեպքում կառաչարկեմ ուսումնասիրել

9 Պատրաստվում ե՞ք արդյոք կիսվել ստացված գիտելիքներով, գործիքներով ձեր գործընկերների հետ:



ցանկացած հնարավոր տարբերակներով

Ճրագրերը նախագծելիս կիրառել որպես գործիք

Սեմինարներում ու հանդիպումներում գործնական կիրառմանը:

Մեր ՀԿ-ում ու գործընկեր կազմակերպություններում, առաջիկա մանկավարժների հանդիպմանը ներկայացնելու եմ:

Մեր ՀԿ-ում աշխատակիցների ու կամավորների, նաև այլ մարդկանց համար, որոնք կցանկանան, իրականացնել ներկայումս դասընթացի թեմաներով:

Ամենօրյա աշխատանքում, ցույց տալով կոնֆիկտների նկատմամբ իմ վերաբերմունքը, հղում ե կատարում դասընթացից ստացած գիտելիքներին

Աշխատանքային հանդիպումների ժամանակ պատմելով, նկարագրելով դասընթացը, նոր ստացված գիտելիքները:

Դասընթացի կարևոր, հետաքրքիր հատվածները տեսանկարահանել եմ և ուղարկել գործընկերներին...

10 Միջոցառման ո՞ր պահն էր որ առանձնակի հիշվեց:

Վերլուծությունները, քննարկումները

Կարծրատիպերի ու դրանց ազդեցության քննարկման մասը:

Բանավեժերը

Խմբային աշխատանքները, մասնակիցների պատմությունները

Կարծրատիպերի խաղը

Վերլուծությունները, քննարկումները

Անկեղծ դժվարանում եմ հիշել

Գործնական պարապմունքները, կարծիքների փոխանակումը:

Կարծրատիպերի դիտարկումը:

Վերլուծությունները, քննարկումները, շփումները

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, քննարկումները

Կարծրատիպերի հաթահարումը (խաղը) հաղթող

Մեղիտացիոն վարժությունները: Կոֆլիկտազգայունության մասին դասընթացը և առհասարակ ամբողջ դասընթացը:

Կարծրատիպերի ստեղծումն ու քանդումը

Հրաժեշտը, երբ թողեցինք յուրաքանչյուրս մի մասունք, հետ գալու ակնկալիքով.....

Գենդերային անհավասարության քննարկում, որը վեր հանեց խմբային դինամիկայի առանձնահատկությունները և ներքին կոնֆլիկտը, որը վերբերում էր խմբի որոշ մասի թեմային չտիրապետելուն, ոչ բավարար չափի զգայուն լինելուն:

Գործնական աշխատանքները:

Երբ թիմով փորձում էինք վերլուծել կոնֆլիկտը, որպես զարգացման ուղվածության խնդիր:

Ծանոթությունների

11 Եւթը 1-2 ուսուցման կարիքներ/բացեր, որ դուք կամ ձեր կազմակերպությունը ունի:

արտերկրի գործընկերների համատեղ ծրագրեր իրականացնելը, ֆինանսական միջոցների հայթայթումը

Մարքեթինգ, սոցիալական էջերի առաջխաղացում

Կոնֆլիկտաբանություն

Կցանկանալիք իրականացնել թրեյնինգ այս թեմայով:

ինքս կուզեի ծանոթանալ կոնֆլիկտների վերլուծության կանկրետ գործիքների, մթողաբանությունների

Արտերկրի մեր գործընկերների հետ համատեղ աշխատանքի փորձ, ֆինանսական միջոցների ձեռք բերում

ՉԼՄ-ների հետ ճիշտ աշխատանք, հաղթող դրամաշնորհ գրել, ծրագրի կայունության ապահովում

Միջոցների հայթայթման ռազմավարություն:

Հայեցակարգի և ռազմավարության մշակում:

Արտերկրի գործընկերների հետ համատեղ գործունեությունը, ֆինանսական միջոցների հայթայթումը

Արտերկրի գործընկերների կապի հնարավորությունները՝ համատեղ ծրագրեր իրականացնելու համար, ֆինանսական միջոցների հայթայթման տարբերակները

Հաղթող ծրագրերը կազմելու հմտությունների զարգացման

Ֆոնդահայթայթման հետ կապված դասընթացներ, և ծրագրեր կազմելու, գրելու առավել խորը հմտություններ:

Ֆոնդահայթայթում

Կազմակերպությունը նորաստեղծ է, կարողությունների զարգացման ցանկացած ուսուցում, կարևոր է, ծրագրերի մշակման կարևորագույն քայլերը, պահանջված լինելը;

Հետազոտությունների կազմման ունակությունների զարգացում, մոնիթորինգի և գնահատման ունակությունների զարգացում:

Աշխատակիցների գերակշիռ մասը կոնֆլիկտազգայուն չեն և մտածում են ոլորտի մասնագետի հրավիրել և փոքր դասախոսություններ կազմակերպել կազմակերպության ներսում:

Ֆոնդահայթայթում, ՀԿ կառավարում

Չեմ կողմնորոշվում

12 Խնդրում ենք նշել ցանկացած նկատառում կամ կարծիք այս դասընթացի մասին, որը վերը չի քննարկվել և կօգնի նմանատիպ դասընթացները հետագայում էլ ավելի արդյունավետ դարձնել:

ցանկալի էր երկու դասավանդողների մասնակցությունը

Գրավոր նյութերի առկայություն

Դժվարանում եմ ասել

քիչ տեսական նյութեր, շատ գործնական աշխատանքներ

Ինձ համար դասընթացը մի փոքր երկարացված էր, կրկնություններ կային

Ուսուցանում էր մեկը, բայց կար երկուսը, որի մասնակցությունը ցանկալի էր

Դասընթացը ավելի շատ զգույցի էր նման, թեև դասընթացավարը շաատ լավ էր, դրական, խելացի, բայց չկար լսարանի կառավարում, չկար ժամանակի կառավարում, կար վիզուալ նյութի պակաս (պրեզենտացիա, նկար), խոսվեց ընդհանուր կոնֆլիկտի մասին, որպեսզի մտածենք, ինչու ոչ նաև զգանք, բայց պրակտիկ գիտելիքի պակաս կար, այսինքն չտրվեցին հստակ գործիքներ, որոնք կարելի է հետագայում կիրառել, սա էլ է մոտեցում, բայց նշեցի այն, ինչ ինձ պակասեց: Դե ե՛ւր կողմից ամեն բան լավ էր ու կազմակերպված, կար անհրաժեշտ ամեն բան հետաքրքիր դասընթաց և շփում ապահովվելու համար

Օրերի ավելացման հաշվին դասընթացի տևողության կրճատում:

Դասաժամերի տևողությունը: Ինքս 5 ժամից հետո հոգնում էի: Պարապմունքների տևողությունը օրական 5, լավ՝ 6 ժամից ավել չլինի: 7-րդ, 8-րդ ժամերին տրվող նյութի ընկալման համար լարվում էի:

Մեկ ուսուցանողը դիմադրել է կարող անցկացնել սեմինարը, երկրորդը ցանկալի է

Ուսուցանողները երկուսն էին, բայց մեկն էր շատ ակտիվ, իսկ մյուսին չլսեցինք, ցանկալի կլիներ երկուսի ակտիվությունը

Ամեն ինչ լավ երկազմակերպված

Կարծում եմ, որ դասընթացի համար կարող էինք տրամադրել ավելի շատ ժամանակ, նաև հարակից այլ հարցեր քննարկել: Բացի դա, ամբողջ դասընթացի ժամանակ պարբերաբար խոսվում էին մի քանի հարցերի շուրջ, Դարաբաղի հարցն ու մի քանի հարցեր: Կարծում եմ նպատակահարմար կլիներ, անդրադարձնալ այլ հարցերին ևս, որոնք չեն պարունակում օրինակ հայրենասիրական, նաև ազգայնամոլական մոտեցումներ, կամ անձնական մոտեցումներ:

պրակտիկ մասը ավելացնել

տեղեկատվության ծավալուն լինելը, սահմանափակ ժամանակը, մնացածը շատ լավ կազմակերպված էր,

Կարծում եմ նպատակային կլիներ մասնակիցներին նախապես նշել թե դասընթացի աշխատանքային լեզուն որն է լինելու և համոզվել, որ բոլոր մասնակիցները և դասընթացավարները որոշ չափով տիրապետում են այդ լեզվին:

Ամեն ինչ շատ լավ էր, ընդմիջումների մասին էլ խոսք չկա, ապրեք:

Դասընթացը շատ հետաքրքիր էր: Դպրոցի տնօրենի հետ քննարկել ենք և աշակերտ-ուսուցիչ - ծնող կոնֆլիկտն ենք վերլուծել մոտ օրերս դպրոցում, անհամբեր սպասում ենք, որ նյութերն ուղարկեք:

Հավանաբար, կարելի է ավելի շատ տեսական գիտելիքներ տալ (թրեյներների կողմից) կամ ազբյուրներ տրամադրել օնլայն կամ առձեռն

13 Ինչպե՞ս եք պատրաստվում կիրառել դասընթացի ժամանակ ներկայացված, քննարկված թեմաները և գաղափարները ձեր հետագա գործունեության և կամ պլանավորվող ծրագրերում: Բերել 2-3 օրինակ, որոնք արդեն ունենք անգամ ձեր մտքում:

Ունեմ պատրաստի ծրագիր հայթուրքական հարաբերությունների բարելավմանը ուղղված

Կկիրառվի` համայնքային զարգացմանը միտված ծրագրերում, աշխատավայրում և առհասարակ կյանքում:

Դեռ չեմ կատարել

Փոխանցել ինֆորմացիան Եվրոպական Համերաշխության Կորպուս-ի կամավորներին, փոխանակվել գիտելիքներով եվ փորձով այս թեմայի շրջանակներում, կազմակերպել հանդիպում-քննարկում տեղական ակտիվ խմբերի հետ:

Մտքում դեռ օրինակներ չունեմ, բայց կոնֆլիկտների նկատմամբ զգայունությունը շատ կարևոր հմտություն էր ու պատկերացնում եմ հստակ, որ ծրագրեր նախագծելու փուլում ու կյանքում առհասարակ` աշխատանքայինից մինչև անձնական, օգտակար է լինելու:

Ունեմ ծրագիր հայթուրքական հարաբերությունների բարելավման հետ կապված

Անկեղծ այս պահին չեմ պատկերացնում, հիմնավորումը վերը նշված էր: Այս դասընթացը երևի ավելի շատ սեփական մտքում, կարծիքում որոշակի փոփոխություններ անելուն օգնեց, քեզ դիտակել որպես կոնֆլիկտ ստեղծող, կամ խտրականություն դնող, նաև դասընթացի շնորհիվ հասկացա, որ հանդուրժողականությունն էլ պետք է սահման ունենա, իսկապես ինչ-որ մեկի իրավունքները վերջանում են այնտեղ, որտեղ սկսվում է իմ իրավունքները, եթե մենք պետք է հարգենք և հանդուրժող լինենք ինչ-որ մեկի կամ ինչ որ խմբի կարծիքի նկատմամբ, ապա նրանք էլ փոխադարձաբար պարտավոր են հարգել և ընդունել այդ կարծիքները:

Շահառուների հետ շփումներում, թիմային աշխատանքներ խթանելիս:

Կիրառելու եմ հոկտեմբերի 31-ին և նոյեմբերի 1-ին Գյումրու ուսուցիչների համար նախատեսվող Քննադատական մտածողություն դասընթացի վարժանքներում, մեր իսկ ՀԿ-ի ներքին ու արտաքին հարաբերությունները կանոնակարգելիս:

Ունեմ ծրագիր հայթուրքական հարաբերությունների բարելավմանը համար, հույսով եմ օգտագործել այնտեղ

Ունեմ ծրագիր հայթուրքական հարաբերությունների բարելավման մասին և ուրախությամբ կկիրառեմ թեմաները որոնք արդեն ունեմ

Մեր գործում մշտապես հարկ է լինում ամնչվել կոնֆլիկտների հետ ,ուստի ամեն օգտակար գիտելիք կկիրառենք

Գիտելիքներ ստանալու արդյունքում, պատրաստվում ենք ստացված ինֆորմացիային անդրադառնալ գալիք ձեռնարկի մեջ, որը պլանավորում ենք ստեղծել <<Բազմազան հասարակություն>> ծրագրի շրջանակներում: Բացի դա ՀԿ մյուս անդամների հետ բրեյմսթորմինգ ենք իրականացնելու և անելու ենք կարելի է ասել սամ ափը: Իսկ գալիք աշխատանքների ընթացքում, բնականաբար օգտագործելու ենք ստացված նյութը:

Շուտով մեր կազմակերպությունը կազմակերպելու է ֆեմինիստական թեմայով դասընթացներ, կփորձեմ կիրառել դրանց ընթացքում

Ցանկացած ծրագրային գաղափար ներկայացնել քննարկման, ակնկալիքով ստանալնոր մտքեր, գաղափարներ, վերլուծել դրանք, կայացնել խմբային որոշում, Կոնֆլիկտների հաղթահարում բանակցությունների, երկխոսության իջոցով.....

Այն ծրագրում, որում այժմ ներգրավված եմ, պլանավորվում է իրականացնել հանրային կարշիքի ուսումնասիրության և խնդրահարուց հարցերի վեր հանում: Այս պարագայում կարծում եմ, որ ստացված որոշ գործիքներ կիրառելի կլինեն արդյունքների վերլուծության համար:

Առաջին հերթին ես կոնֆլիկտներին նայում եմ արդեն կոնֆլիկտազգայուն ակնոցներով, գործնական աշխատանքների մեթոդները կիրառելի են այլ բովանդակությամբ և ֆորմատով դասընթացների համար:

Վերևում արդեն նշեցի